

## ՀԱՅՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ս. ԲԱՐՍԷԼԻ ՎԵՑՈՐԵԻՑ ՄԷՋ

(Տգ. Վեներտի 1830)

## 1. Անդրացուցիչ

Չեւ եւ երեւալ են բնաւ ամենեկին կո-  
րեան մատաղոյն ատամունք, և որ զբգոյ-  
ցէ ոք զնա՝ այնու տեղեաւ ընդ որ ա-  
տամունքն զալոց են՝ յարձակի առնու  
զանդարացուցիչն իւր (էջ 190):

Անդրացուցիչ բառը՝ չունի նշիւ. բայց  
ԱՐ կը նշանակէ և կը մեկնէ «ձանձորա-  
ցնող»։ Կ'երևայ թէ կ'ուզէ կապել անդրա-  
նալ «Հանապազորդել» բային. բայց ըստ  
իւ այս մեկնութիւնը ուղիղ չէ։ Անդրա-  
ցուցիչ կրկնութիւնն է որ գրգռիցէ՝ ձեռն.  
(եթէ մէկը զինքը զրգոէ, կը յարձակի կը  
խածնէ իր զրգոտը), ուստի պէտք է  
հասկնալ «զրգոտող, զայրացնող, բարկա-  
ցնող»։

## 2. Բաղտի

Եւ առաւել սքանչանամ ընդ այն՝ որ  
հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել  
զբարի կամ զբաղտի կեանս նոցա (էջ  
119):

Խօսքը բախտ գուշակողներու մասին է.  
կը զարմանամ, կ'ըսէր Ս. Բարսեղ, ա-  
նոնց վրայ՝ որ իրենց կեանքը այդ գու-  
շակներուն կը հաւատան, և մեկնել կու-  
տան իրենց բարի կամ... կեանքը, բնա-  
կանաբար պակասած բառը (բաղտի) պէտք  
է հասկնալ «գէշ, չարաբախտ, չար», եւ  
թէ սակայն խանգարուած գրչութեան մը  
հետ չէ գործերնին։

## 3. Դալիժ

Ձի մին անուանեալ կոչի Պոնդոս Եւք-  
սիոնս և մեան Պրովպոնտինոս և Հնչիւս-  
պոնտիոս, և մեան Իգելուս և Ռեննիոնս. և  
մեա ծոնն Սարդարնիկէ աշխարհի և մեան  
Սիկիլիա աշխարհին. դարձ բազում ևս  
այլ անուամբք, որ անցանն ըստ թիւ և  
ըստ համար մարդկան (էջ 75):

Հոս դարձ կը նշանակէ «Թո՛ղ, չհա-  
շուած, բացի», որով դարձ այլ անուամբք  
կը նշանակէ «բացի միւս անուններէն»։  
Անշուշտ կը ծագի դասնալ բայէն և բուն  
իմաստն է «դարձիւր, ետ դարձիւր, մէկդի  
ձգէ՛, Թո՛ղ»։ Այս ձեւը՝ որուն Ոսկեդարեան  
գործածութիւնը այլուստ անծանօթ է, ըստ  
կարեւոր է, որովհետեւ կը բացատրէ յետ-  
նադարեան բարց «բացի» բառին ծագու-  
մը։ Վերջինս դարձ հնագոյն ձեռն տար-  
բեր զրչութիւնն է, ճիշտ այնպէս՝ ինչպէս  
ունինք ապարարց փխ. ապարար, իրր  
թարգմանութիւն յն. ἀπόστροφος «ետ դար-  
ձող» ձեռն։ Ասոնք թանկագին հետերեր են՝  
որոնք կը ցուցնեն թէ Միջին Դարուն  
Հայաստանի մէջ կար գաւառ մը՝ ուր դա-  
սական հայերէնի թրթռուն ձայները վե-  
րածուած էին շնչող խուլի (γ > ք, ք > ց,  
ք > փ, ց > ք, չ > չ). յունարան քերթողա-  
կան լեզուին հեղինակները իրենց արուես-  
տակեալ լեզուն շինած ժամանակ օգտուե-  
լով զանազան գաւառական ձեռնէ՝ այս  
բառերն ալ յիշեալ գաւառներէն առած  
են։ Պոլսոյ զրական արտասանութիւնը  
նոյն գաւառին արտասանութեան համա-  
պատասխանն է։

## 4. Կիտի

Եւ կէսը փոխանակ երիվարացն՝ իւ-  
րեանց հետիոտիւքն ցուցանեն զարշա-  
ւանս և ըստ օրինակի մարտին երիվարացն  
մարտ եղեալ զմարտկաց կիտեաւն կոռուին  
(էջ 67):

Կը թուի թէ կը նշանակէ «կոռուի կամ  
մրցման նպատակը կամ տեղը»։

## 5. Կհատ

Եւ զայս զի՛նչ արասցուք, զի արդ եր-  
կիր առ իւր կոչէ զմեզ, կհատ կատարեալ  
կայ պատրաստական, պատմել մեւք զհառս  
իւր զագանաց և զամենայն զեռնոց (էջ  
176):

Լուսանցքին մէջ բառս ուղղուած է  
կէպտ. մին կամ միւսը սխալ է, ուրեմն  
և իմաստն ալ անծանօթ։

## 6. Հաստաբերիտ

Արդ այլ ազգ գիշակեր հաւուցն է. քանզի այլակերպ կերպարանօք իբրեւ առ ի պէտս որոյն պատշաճեալ են, մագիլս սուրս և հաստաբերիտ ունին և կտուցս կոր և սուր և խիստ (էջ 162):

Ստորագծեալ բառին տեղ ձեռագիրը ունի հաստաբերիտ. հրատարակիչը ուզղած է հաստաբերիտս. բայց մագիլին համար հաստաբերիտ ածականը շատ անյարմար է. ըստ իս և տառը դարձնելով ի՛ պէտք է կարգալ հաստաբերիտ: Ասիկա նոր բառ մ'է՛ որ կազմուած է հաստ և քիտ «մագիլին ետեի մատը» բառերէն և կը նշանակէ «հաստ բիտ ունեցող», ինչ որ շատ գեղեցիկ կը յարմարի մագիլին:

## 7-8. Մոլ, մամ

Դարձեալ... կարի յոյժ զարմանամ... ընդ նուրբ խայթոցն կարճի՛ թէ՛ զիւրոյ կորացեալ և կրկնեալ կազմի հարկանել ըստ օրինակի մոլ և կոր կերպարանաց փողի (էջ 195):

Ստորագծեալներուն տեղ լուսանցքի վրայ նշանակուած է ման և կոր. ասոնք բոլորը հոմանիշ ձևեր են և իրար կը բացատրեն: Այսուհետև կրնանք ուրեմն բառաբաններուն մէջ առնել ման և մոլ բառերը, երկուքն ալ «կոր» նշանակութեամբ:

## 9. Նկատեսալ

Ձի մեծամեծ իրք՝ որ ի բացուստ երկնատեսակ երեւն, մեծայաղթ տարերքն նոցա իբրու սակաւիկ ինչ երեւն տեսեան սկան. քանզի քայքայի սակաւ տեսիլ աւան ի տկար զօրութենէ լուսոյն՝ զոր ունի (էջ 129):

Ստորագծեալ բառին տեղ ձեռագիրն ունի սկանատեսակ. ՆՀԲ կը յիշէ այս բառը, բայց նշանակութեան անյարմարութեան պատճառաւ կը համարէ անստոյգ բառ: Իրաւունք ունին Վեցօրէից հրատարակիչները՝ որոնք բառը սրբագրած են նկատեսալ. Հատուածին միտքն է թէ մեծ առարկաները հետուէն փոքր կ'երեւան. երկ-

նատեսակ կը նշանակէ «փոքր երեցող» (հմտ. նկնածեւ, նկնահաստակ) և այս իմաստով ալ պէտք է անցունել բառարանեւրու մէջ՝ ուր մոռցուած է:

## 10. Ի պնդան արկանել

Իցէ երբեք տեսեալ քո զրդխումն աղբերականց, որ յորգեալ ելանն ի ներքին սանդարամետաց... ո՞վ իցէ որ ճեպեալ ստիպիցէ զյորդաբուխ բխումն աղբերաց՝ ի խորոց անդնդոց երկրի վերանալ ելանել ի բարձունս և զիջանել զեղու անդէն ընդ երեսս երկրի. և ո՞վ իցէ յորում եղեալ միցիցէ զարգելեալ բնութիւն նոցա և ի պնդան արկանել նեղիցէ զբազմութիւն ջուրց՝ ի ներքին կայենիցն աստ ի վեր գտանել (էջ 70):

Կը նշանակէ «ստիպել, զոռել». անշուշտ պիտի բառէն առաջացած ձև մ'է. հմտ. պնդել, հետապնդել:

## 11. Սրտիլ

Արդ քանզի եղև ի վերայ նոցա (ջուրց) մեծասաստ հրամանի ժողովոյն՝ ամփոփել ի մի վայր հասանել, սրտին զնացս և ընթացս ճեպել ստիպել հասանել արգելուլ զիրարքանչիւր տեղիսն ետեղակալս (էջ 71):

Կը նշանակէ «շտապել, անապարել», եթէ խանգարուած զըջութիւն մը չէ:

## 12. Քանտ

Գագանն՝ յորժամ ի գառագիւղն արգելուցուն, զմիչեւն և զմիչեւն ետէ կիրթ ունին և զայրուցս ցամառն և զգագանութիւնն դառնացեալ անձանց ընդ ծակս քանոնացն զայրագիւղն ցուցանիցեն, և ընդ միջոց խաղխամացն պէսպէս կերպարանոց որդրին (էջ 198):

Խաղխամ բառին հոմանիշն է. կը նշանակէ «գառագիւղին ճաղերը»:

## 13. Օղերծել

Տեսանիցես զմեծութիւն նաւու, որ բարձեալ բերիցէ աղխաղխեալ օղերծեալ զբազմաշահ վաճառսն (էջ 129):

Տեղէն յայտնի է որ կը նշանակէ «գիւղել, բեռնաւորել»։ ասիկա անշուշտ ուղերձի բառն է, որ կը նշանակէ «նուիրել, ընծայել» և որ կայ նաև օղերձի ձևով գրուած։ «գիւղել, բեռնաւորել» պէտք է համարել բառին երկրորդ նշանակութիւնը։ Հինէն ունինք նաև կրճատ ձևով դերձ «հակ, վաճառքի կապոց», որ մէկ անգամ գործածքը է Ոսկ. մ. բ. 1. «Մի՛նրեալ էին բեռնը դերձից»։ Նախաձայն ու—ին անկման համար հմտ. ուղղորդ > դրոյ։

ԿԻՌՐԴԻ ԵՐՈՒՍԱԿԵՄԱՏՈՅ  
ԿՈՉՈՒՄՆ ԸՆԴԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Տգ. Վահա 1882)

Արքանայր «վանահայր»։ գործածական է նոր գրականին մէջ և հին մատենագրութեան մէջ գոյութիւն չունի. մէկ անգամ իմ գտնիմ միայն կոչ. էջ 369. «Ո՛չ եթէ առէք դուք զհոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ, այլ զհոգի որդեգրութեան, որով կարդա՞ք արքանայր»։ Բայց այս ձևը սխալ է հոս և պէտք է կարգաւ «արքայ, հայր», իբրև երկու բառ, ինչպէս կը գտնենք Հռովմ. բ. 15 հատուածին մէջ, որմէ առնուած է. «Ձի ո՛չ առիք զհոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ, այլ առիք զհոգին որդեգրութեան, որով աղաղակեմք արքայ, հայր» (յն. ἐν ᾧ ἡμεῖς, Ἀββᾶ, ὁ πατήρ)։

Անկարձ «գոգ, ծոց, գիրկ»։ Ծրարիցէ՛ որ հուր յանկարճի և զծորձս իւր ո՛չ կիւղու (էջ 10)։ Այս հատուածը առնուած է Առական գրքէն (Ձ. 27). որ մեր սովորական թարգմանութեան մէջ սակայն է. «Ծրարիցէ՛ որ հուր ի գոգ իւր և զհանդերձս ո՛չ այրիցէ»։ Անկարձ բառը չգիտէ ՆՃԲ. բայց ԱԲ կը նշանակէ «ծոց, գիրկ» նշանակութեամբ. Փէշտիմալճեանի բառարանն ալ գիտէ յանգոյրձ «ծոց, գիրկ», որ անշուշտ նոյն բառին տարբեր մէկ գրութիւնն է։ Առական գրքէն մեր բերած

համեմատութիւնը հաստատապէս կ'ստուգէ բառին տրուած նշանակութիւնը։

Անհաստոյ «անհաւատալի, չհաւատալու»։ Թէ այն հաւատոյ է և այս հաւատարիմ. թէ այն անհաւատոյ է և այս անհաւատոյ է. այլ ինձ երկորին հաւատաւ ըրիմ են (էջ 289). — Եթէ այն հաւատալու բան է, այս ալ հաւատալու է. եթէ այն անհաւատալի է, այս ալ անհաւատալի է. իսկ ինձ համար երկուքն ալ հաւատալի են, — ՆՃԲ ունի բառս ճիշտ նոյն վկայութեամբ՝ բայց անհաստ ընթերցուածով։

Ամենկին «բաժնեյ»։ Անդ վասն Հոգւոյն սրբոյ վարդապետութիւնը ճառիցդ բազում անգամ յայս և յայն բաժանին. բայց ինքն Հոգին առանց բաժանման է, զի միևնոյն է... և ոչ եթէ առմէկնելով ի միմեանց զճառս վարդապետութեանս բաժանուին ինչ է հաւատոյ (էջ 366)։

Արձալիմա՛ն «ազատ համարձակ վճիռ տուող»։ Նաև պսակն ինքնին խորհուրդ մի մեծ է, զի լուծումն մի էր մեղաց, և արձակումն մի էր արձակավճիռ դատաստանին (էջ 250)։

Երկօրոց «երկկոյնի ժամանակ անցընելը»։ Եկ դու և առ երանելին Դաւիթ և կա՛լ քեզ առակ օրինակի զնորա զապաշխարութիւնն. յանցեալ մեծն յետ երկօրոցի առ ընդ երեկս, զի ելեալ շրջէր ի վերայ տանեաց (էջ 18)։

Ընկուզաստան «ընկուզենիներու պարտէզ»։ Կամբն գիտել և զտեղին. աս է և յերգս երգոցն. ի պարտէզ ընկուզաստանի շրջէք (էջ 277)։

Թաղան «Ըրային նախակենդանի»։ Յանդիմանեաց զքեզ ի լուսաւորաց աւրգանի... յերկոյն գիտնի զմոսեալ և յեղեանցն եղէզն և ի բանջարոց զոպայն և սպունգն ի ծովային թաղանթացն և ի ծառոց փայտ խաչին (էջ 269)։ — Կրկնակ բառերու իւրացանչիւր շարքին մէջ ուղղական հոլով դրուածները կը ցուցնեն մասնաւոր առարկաները, իսկ քաղաքականները կը ցուցնեն ամբողջ սեռը կամ ընտանիքը, այսպէս արեգակը մէկ մար-

մին է, իսկ լուսաւորները բոլոր երկնային մարմիններու ամբողջութիւնը կը ներկայացնեն. զոպան բանջարներու մէջ տեսակն է միայն, իսկ ամբողջ ընտանիքը նշանակելու համար դրուած է բանջար. այսպէս ալ սպունգը մասնաւոր անուն է, իսկ քաղանքը կը նշանակէ սպունգի և նման ծովային նախակենդանիներու ամբողջ ընտանիքը:

Լամբի «տարածուիլ, ամէն կողմ բռնել՝ գրաւել»։ Եհնաս լամբեցաւ զամենայն տիեզերօք առ հասարակ անունն այս (ըրիստոնէութեան)։ Այլ երեսայն ըսել իբրեւ ի խորշ մի կողման միող են, իսկ ըրիստոնեայք ընդ ամենայն ծագս երկրի (էջ 173)։ — Լամբի բառը կը նշանակէ «վրան առնել, բառնալ, շալկել», հմտ. Չարք են այնոցիկ, որ լամբեալ (այլ Չ. բարձեալ) յինքնանս զիրեաւ ունին (էջ 10)։ Բայց հոս կրաւորական է բայը և այս իմաստը չի յարմարիր։ Ըստ հրատարակչին (էջ 178) յոյն բնագրին մէջ բառիս ղէմ կը գտնենք περὶ τῆς «շուրջ ընթանալ, ծաւալիլ», որով կարելի է նաև լամբի ձևին այս իմաստը տալ։

Խաբոյիկ «խարող, խաբեբայ»։ Իբրեւ զխաբուսիկն Յակովբ, որ իմաստութեամբն խելօք յափշտակեաց զօրհնութիւնն (այլ Չ. խաբոյիկն, իմա խաբողիկ)։

Կառատոր «կառքին մէջ նստողը, կառքով զացող նամբորդ»։ «Եկայք առ իս օրհնեալը Հօր իմոյ» ցամպեղէն կառատորն ստիցէ, որ յամպեղէն կառոն նստեալ իցեն (էջ 323)։ — Բառիս կազմութեան համար հմտ. ձխատոր ձիուն վրայ նստողը։

Կրկնցակ «փոքր կամ խեղճ վերաբկու»։ Եկն ել ի խաչ Յիսուս, բայց մեկնաշանուղերձ էր և կրկնցակ մի զիրեաւ ունէր (այլ զինուորքն բաժանէին զկրկնոցն, ի չորս պատառէին. այլ զագանելին ոչ պատառէին և վիճակս յայնր վերայ արկանէին (էջ 258)։

Միժանձեան «միահեծան, մեծագոր»։

Ձի մեծահեծան (այլ Չ. միահեծան) իշխանութեան պատուովն զհայրութիւնն ժողովեալ հաւատասցուց, ի մի Աստուած հաւատալ (էջ 124)։

Յաղրոն «յաղթական»։ Սոյնպէս թոյլ ետ սատանայի մարտնչել, զի յաղթեցնեն նմա մարդիկ և պսակեցցին. զի յորժամ յաղթունն (այլ Չ. յաղթութիւնն)<sup>1</sup> կանգնեալ լիցի, մեծապէս ծանակեցցի նա ի վատթարաց անտի ի պարտութիւն մատնեալ (էջ 139)։ — Հմտ. յաղրոս, յաղրկոս հոմանիշները։

Նորոյիմակաղայն «աւելի նորորինակ, շատ տարօրինակ»։ Եթէ ոչ նմանագոյնս ինչ օրինակս և նորորինակագոյնս ինչ ծնունդս տեսնեն (էջ 227)։

Չգիտուածով «անգիտութեամբ»։ Թէ ոք ի ձէնջ բանիւ հայոյութեան խաչեաց զԳրիստոս, թէ ոք ի ձէնջ չգիտուածով առաջի մարդկան ուրացաւ... (էջ 42)։ — Հմտ. ՆՀԲ գիտուածով։

Սաղմոսեցեաց «սաղմոսեցու»։ Ո՛չ եթէ ես ասեմ զայս, այլ սաղմոսեցեացն ասաց ի դէմս Յիսուսի (էջ 160)։ — Այս բառը ՆՀԲ ունի, բայց ԱԲ ջնջած է։

Վիմածակ «բարի մէջ փորուած՝ ծակուած»։ Արդեօք ի վիմածակ կափածոյ ըստանց իցէ շինեալ գերեզմանն (էջ 265)։

Տկարակոյմ «տկար՝ թոյլ կողմ»։ Ձի սա իբրեւ ոչ իշխեաց մատչել առ այրն, զի հօրագոյն էր, ի տկարակոյմն կուտ անտի մատչէր առ կին անդր (էջ 205)։

Տոնչեամբ «ցորեկով»։ Չիմահար պոռնիկն սպրեցուցանէր կրճաւորն Յեսու, որ զիշերի զղէտն ընկալաւ և տունջեամբ նմա զագատութիւն շնորհէր (էջ 168)։

Շար.

Հ. ԱՅԱՌԵԱՆ

1. Յերես ընդ ընթացումն ըլլալ յաղրոյիմն. այս պարագային յաղրոն բառը կը ջնջուի. յոյն բնագրին համանմանութիւնը կրնայ վճռել խղիղը։